ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԾՁԲ-18/4/1

ք. Աշտարակ «20» Սեպտեմբերի 2018 թ.

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Թ.Շահվերդյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Տ.Վիրաբյան -ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Աշտարակի թիվ 5 <<Արաքս Մուրադյանի անվան>> Մանկապարտեզ ՀՈԱԿ-ի երկրորդ հարկի ձախակողմյան հատվածի վերանորոգման և Աշտարակ համայնքի "Արևիկ" մանկապարտեզի, 3-րդ կորպուսի աջ և ձախ հատվածների ջեռուցման համակարգի իրականացման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի Չափաբաժին 1՝ N Ա Հավելվածում, Չափաբաժին 2՝ N Բ Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 65000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **14** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան	**<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ**
ՀՀ Արագածոտնի մարզ	**ք. Երևան, Նոր Նորք Բագրևանդի փ. 1/3, բն. 39**
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	**«Այդի բանկ» ՓԲԸ**
ՀՎՀՀ՝ 05005705	**Հ/Հ 11808003015800**
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**ՀՎՀՀ00883436**
Հ/Հ 900442101433	**Տնօրեն՝**
Համայնքի ղեկավար	
---------- Թ.Շահվերդյան	**---------- Տ. Վիրաբյան**

Հավելված Ա

Շինարարության կազմակերպման նախագծի շրջանակներում նախատեսվել է

Համաձայն<<>>ՀՀ Արագածոտնի մարզի,Աշտարակի թիվ 5 <<Արաքս Մուրադյանի անվան>> Մանկապարտեզ ՀՈԱԿ-ի երկրորդ հարկի ձախակողմյան հատվածի վերանորոգման նախագծանախահաշվայինփաստաթղթերիմշակմանաշխատանքների,ներկայացնում եմ կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի օգտագործվող նյութերի երաշխիքային նվազագույն ժամկետների սահմանում ըստ նյութերի տեսակի

ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ԵՐԱՇԽԻՔԱ ՅԻՆ ԺԱՄԿԵՏ
Մետաղապլաստեբլոկով, սպիտակպրոֆիլներից 60մմհաստությամբ, խուլդռներ, ներառյալսարգավորումները	7 տարի
Ցեմենտավազեհարթաշերտ H=40մմ	7 տարի
Հատակներիերեսպատումկերամիկականսալերով	7 տարի
Շրիշակներկերամիկականսալերից h-150մմ	7 տարի
Պատերինշեպերիբարելավվածսվաղգաջեշաղախով	3 տարի
Պատերիբարելավվածսվաղցեմենտավազեշաղախով	5 տարի
Պատերիմածկապատումներկումջրակայուններկով	3 տարի
Պատերիերեսպատումհախճասալիկով	5 տարի
Առաստաղներիբարձրորակսվաղգաջեշաղախով	7 տարի
Առաստաղներիմածկապատում և ներկումջրակայուններկով	7 տարի
Պատուհաններիշերտավարագուրներիտեղադրում	3 տարի
Մետաղականտարրերիերկշերտյուղաներկում	3 տարի
Ցեմենտավազեհարթաշերտ H=40մմ	7 տարի
Ազբոշիֆերիցծածկույթիներքինմակերևույթիմաքրում և ներկումյուղաներկով	5 տարի
ՊոլիպրոպիլենեխողովակներիմոնտաժումΦ15x2,3մմ	7 տարի
Փական ջրային Φ15մմ	1 տարի
Լվացարանիծորակ-խառնիչ	1 տարի
Պոլիպրոպիլենեֆիտինգներևձևավորմասեր	3 տարի
ՊոլիվինիլքլորիդեΦ100մմխողովակ	7 տարի
Նույնը, Φ50մմ	7 տարի

Խեցեզուգարանակոնք	5 տարի
Խեցելվացարանակոնք	5 տարի
ՊոլիվինիլքլորիդեանցումՓ100-50մմ	7 տարի
ՊոլիվինիլքլորիդեանկյունակՓ50մմ	7 տարի
Նույնը, Փ100մմ	7 տարի
ՊոլիվինիլքլորիդեքառաբաշխիկՓ100մմ	7 տարի
ՊոլիվինիլքլորիդեեռաբաշխիկՓ50մմ	7 տարի
Նույնը, Փ100մմ	7 տարի
Պոլիվինիլքլորիդեստուգիչներ (կանգնակներիվրա) Փ100մմ	7 տարի
ՀոսակՓ50մմ	7 տարի
Լուսատուառաստաղի	7 տարի
Անջատիչմեկստեղնանի	3 տարի
Երկբևեռ վարդակ	3 տարի
Տուփ վարդակների և անջատիչների	7 տարի
Ջրիբաքիմետաղականհիմնակմախք	7 տարի
Մետաղականտարրերիերկշերտյուղաներկում	3 տարի
Ջրիբաքիմոնտաժումպոլիէթիլենային, 1000լ (ուղղանկյունպրիզմայաձև)	7 տարի
0.5 HP ջրիպոմպ G=35լ/րոպե, H=35մ, N=8մ	3 տարի
Խողովակմեկուսացումով, 16x2մմ, նախատեսվածսառըջրիհամար	7 տարի
Նույնը, Փ32մմ	7 տարի
Նույնը, Փ20մմ	7 տարի
Նույնը, Փ15մմ	7 տարի
ՀետադարձփականՓ32մմ	3 տարի
ՋրայինփականՓ32մմ	3 տարի
Նույնը, Փ20մմ	3 տարի
ԴատարկմանփականՓ25մմ	3 տարի

Պահպանելով արտադրողի կողմից սահմանված նյութերի շահագործման պայմանները երաշխիքային ժամկետում կապալի օբյեկտի ,դրա առանձին մասերի«կոնստրուկցիաններ և այլ» և օգտագործված նյութերի շարքից դուրս գալու դեպքում, շինարարական կազմակերպությունը պարտավոր է վերացնել այդ թերություններըիրմիջոցներով:

Հավելված Բ

Շինարարության կազմակերպման նախագծի շրջանակներում նախատեսվել է

Համաձայնպայմանագիր <<>>ՀայաստանիՀանրապետությանԱրագածոտնի մարզի,Աշտարակ համայնքի, "Արևիկ" մանկապարտեզի, 3-րդ կորպուսի աջ և ձախ հատվածների ջեռուցման համակարգի իրականացման

աշխատանքներինախագծանախահաշվայինփաստաթղթերիմշակմանաշխատանքների,ներկայացնում եմ կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի օգտագործվող նյութերի երաշխիքային նվազագույն ժամկետների սահմանում ըստ նյութերի տեսակի

ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ԵՐԱՇԽԻՔԱ ՅԻՆ ԺԱՄԿԵՏ
Պանելայինմարտկոցների PKKPտեղադրում	7 տարի
Պոլիպրոպիլենեխողովակներիմոնտաժում	7 տարի
Ֆիտինգներ և ձևավորմասեր	7 տարի
Փականներջերմակարգավորիչ,խցանային, օդահեռացմանդահեռացման	3 տարի
Լամինաթեսալիկներովծածկույթ	3 տարի

Պահպանելով արտադրողի կողմից սահմանված նյութերի շահագործման պայմանները երաշխիքային ժամկետում կապալի օբյեկտի ,դրա առանձին մասերի«կոնստրուկցիաներ և այլ» և օգտագործված նյութերի շարքից դուրս գալու դեպքում, շինարարական կազմակերպությունը պարտավոր է վերացնել այդ թերությունները իրմիջոցներով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101433

Համայնքի ղեկավար

----------Թ.Շահվերդյան

ԿԱՏԱՐՈՂ

<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Բագրևանդի փ. 1/3, բն. 39
«Այդի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11808003015800
ՀՎՀՀ00883436
Տնօրեն՝

----------Տ. Վիրաբյան

Հավելված N 1
«20» Սեպտեմբերի *2018 թ. կնքված*
ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԾՁԲ-18/4/1*ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71351540	Աշտարակի թիվ 5 <<Արաքս Մուրադյանի անվան>> Մանկապարտեզ ՀՈԱԿ-ի երկրորդ հարկի ծախակողմյան հատվածի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում 1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով , տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան: 2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: 3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝ .ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը վերանորոգման նորմերին և - կանոններին .Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը, .ստուգել և հաստատել բանվորական գծագրերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից, .ստուգել և վերահսկել նյութերի որակը ,արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին, .վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի	դրամ	30000	1	*<< Արագածոտն ի մարզ,ք. Աշտարակ*	**նախատեսվում է ձեռքբերել մինչև 2018թ. Հոկտեմբերի 20-ը**

		շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, .ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները , որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար, .ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար, .կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում, .գտնել շինարարության ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, .հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ . կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր), .ստուգել և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ Կապալառուի կողմից նախապատրաստված բանվորական նախագծերի մեջ, կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը, Շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում					

2	71351540	Աշտարակ համայնքի "Արևիկ" մանկապարտեզի, 3-րդ կորպուսի աջ և ձախ հատվածների ջեռուցման համակարգի իրականացման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում 1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով , տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան: 2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: 3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝ .ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը վերանորոգման նորմերին և կանոններին .Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը, .ստուգել և հաստատել բանվորական գծագրերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից, .ստուգել և վերահսկել նյութերի որակը ,արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին, .վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, .ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները , որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար, .ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար, .կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում, .գտնել շինարարության ժամանակ առաջացող	դրամ	35000	1	<< *Արագածոտնի մարզ,ք. Աշտարակ*	**նախատեսվում է ձեռքբերել մինչև 2018թ. Հոկտեմբերի 20-ը**

		խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, .հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ . կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր), .ստուգել և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ Կապալառուի կողմից նախապատրաստված բանվորական նախագծերի մեջ, կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը, Շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101433
Համայնքի ղեկավար

---------- Թ.Շահվերդյան

ԿԱՏԱՐՈՂ

<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Բագրևանդի փ. 1/3, բն. 39
«Այդի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11808003015800
ՀՎՀՀ00883436
Տնօրեն՝

---------- Տ. Վիրաբյան

Հավելված N 2
«20» 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540	տեխնիկական հսկողության ծառայություն (Աշտարակի թիվ 5 <<Արաքս Մուրադյանի անվան>> Մանկապարտեզ ՀՈԱԿ-ի երկրորդ հարկի ձախակողմյան հատվածի վերանորոգման աշխատանքների)	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .	. . .	30 000	30 000	30 000	30 000	30 000
2	71351540	տեխնիկական հսկողության ծառայություն(Աշտարակ համայնքի "Արևիկ" մանկապարտեզի, 3-րդ կորպուսի աջ և ձախ հատվածների ջեռուցման համակարգի իրականացման աշխատանքների)									35 000	35 000	35 000	35 000	35 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101433
Համայնքի ղեկավար

_____ Թ.Շահվերդյան

ԿԱՏԱՐՈՂ
<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Բագրևանդի փ. 1/3, բն. 39
«Այդի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11808003015800
ՀՎՀՀ00883436
Տնօրեն՝

_____ Տ. Վիրաբյան

Հավելված 3
«20» Սեպտեմբերի *2018 թ. կնքված*
ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԾՁԲ-18/4/1*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«20» Սեպտեմբերի *2018 թ. կնքված*
ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԾՁԲ-18/4/1 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն